Հանրային Առողջության Վարչության պահանջները՝ Հրդեհից տուժած սեփական տարածքում հանգստի մեքենաների և շարժական տների ժամանակավոր օգտագործման վերաբերյալ

Հունվարի 01, 2025

Շրջակա Միջավայր և Առողջություն

County of Los Angeles Public Health

Մինչ դուք վերակառուցում եք ձեր տունը, հանգստի մեքենանան (RV) կամ շարժական տունը կարող է օգտագործվել որպես ժամանակավոր կացարան: Նախքան ժամանակավոր բնակարանից օգտվելը, ճշտեք ձեր տեղական քաղաքային պլանավորման բաժիններից, թե որոնք են պահանջները և թույլտվությունները: Աղբյուրների մասին այս ուղեցույցը տեղեկություններ է տալիս ժամանակավոր կացարանների վերաբերյալ Հանրային Առողջույթան Վարչության պահանջների մասին:

ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ

Տեղանքի կեղտաջրերի մաքրման ծրագիր՝ (626) 430-5380

Որպեսզի ստանաք Հանրային Առողջության Վարչության (DPH) թույլտվությունը հանգստի մեքենայից (RV) կամ շարժական տնից կեղտաջրերը հեռացնելու համար, խնդրում ենք ստուգման համար ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

Հանգստի մեքենաներ (**RVs**)՝ ներառյալ տնակ-մեքենաներ, մեքենաների ճամփորդական կցասայլեր, ճամբարային կցասայլեր, «հինգերորդ անիվ» կցասայլեր, ճամբարային բեռնատարներ և այլն:	**Տարբերակ 1**	Գույքի վրա եղած սեպտիկ համակարգը օգտագործելու համար խնդրում ենք ներկայացնել հետևյալ երկու ձևաթղթերը. 1. **«Գնահատման ձև՝ առկա ջրի մաքրման համակարգի (OWTS) նախագծի ստուգման համար»**, որը լրացված է սեպտիկ համակարգի որակավորված կապալառուի (Qualified Contractor, QC) կողմից: Որակավորված կապալառուն այն անհատն է, ով ունի Կալիֆորնիայի՝ կապալառուների Կարգ A, C 42 կամ C 36 վավեր արտոնագիր, և 2. **«Դիմում տեղանքի կեղտաջրերի մաքրման համակարգի ստուգման համար»**, Հանրային Առողջության Վարչության նախնական թույլտվություն(ներ)* և Հողօգտագործման ծրագրի համար $167-ին համապատասխան վճար: **Երկու ձևաթղթերն էլ հասանելի են այստեղ՝** http://publichealth.lacounty.gov/eh/business/septic-systems.htm:
	Տարբերակ 2	Ձեր RV-ի հավաքման բաքը տվյալ վայրում օգտագործելու համար խնդրում ենք տրամադրել Լոս Անջելեսի Շրջանում գործող արտոնագիր ունեցող՝ կոյուղաջրերի պոմպամղման ընկերության հետ ընթացիկ պայմանագրի պատճենը:

Շարժական տուն	Գույքի վրա եղած սեպտիկ համակարգը օգտագործելու համար խնդրում ենք ներկայացնել հետևյալ երկու ձևաթղթերը. 1. **Գնահատման ձև՝ առկա ջրի մաքրման համակարգի (OWTS) նախագծի ստուգման համար»**, որը լրացված է սեպտիկ համակարգի որակավորված կապալառուի (Qualified Contractor, QC) կողմից: Որակավորված կապալառուն այն անհատն է, ով ունի Կալիֆորնիայի՝ կապալառուների Կարգ A, C 42 կամ C 36 վավեր արտոնագիր, և 2. **«Դիմում տեղանքի կեղտաջրերի մաքրման համակարգի ստուգման համար»**, Հանրային Առողջության Վարչության նախնական թույլտվություն(ներ)* և Հողօգտագործման ծրագրի համար $167-ին համապատասխան վճար: **Երկու ձևաթղթերն էլ հասանելի են այստեղ՝** http://publichealth.lacounty.gov/eh/business/septic-systems.htm:

***Ժամանակավոր մեքենա - տներում կարող են օգտագործվել միայն այն սեպտիկ համակարգերը, որոնք ունեն նախնական թույլտվություն Հանրային Առողջության Վարթության (DPH) կամ Շինարարության և Անվտանգության տեղական վարչությունից (B&S): Սեպտիկ համակարգի նախնական թույթտվության պատճենը պահանջելու համար դիմեք Տեղանքի կեղտաջրերի մաքրման ծրագրին կամ ձեր տեղական Շինարարության և Անվտանգության բաժին:**

ԽՄԵԼԻ ՋՈՒՐ

Խմելու ջրի ծրագիր՝ (626) 430-5420

Որպեսզի խմելու ջրի մշտական աղբյուրից օգտվելու թույլտվություն ստանաք Հանրային Առողջության Վարչությունից, խնդրում ենք ստուգման ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Եթե ձեզ սպասարկում է ջրամատակարարման ձեռնարկությունը (օրինակ՝ Waterworks Districts, Las Virgenes Municipal Water District և այլն), խնդրում ենք **ներկայացնել ձեր ջրի վարձի պատճենը՝** որպես **Տարածաշրջանային ծրագրման վարչությունը (DRP) ներկայացվող ձեր դիմումի մաս**:
- Եթե դուք ջուրը ստանում եք ձեր սեփական տարածքում եղած ջրհորից՝
    - Խնդրում ենք լրացված **«Ջրհորի վերօգտագործման դիմումը» («Well Reuse Application»)** ներկայացնել Խմելու ջրի ծրագրին՝ ստուգման և թույլտվության համար: «Ջրհորի վերօգտագործման դիմումը» հասանելի է այստեղ՝ http://publichealth.lacounty.gov/eh/safety/small-water-systems-wells.htm:
    - «Ջրհորի վերաօգտագործման դիմումը» հաստատելուց հետո Խմելու ջրի ծրագիրը կհրապարակի **«Ջրի հասանելիության մասին նամակ»՝** ձեր Դիմումը Տարածաշրջանային Ծրագրման Վարչությանը (DRP) ներկայացնելու համար:

Եթե բացառիկ հանգամանքներում եք կամ լրացուցիչ տեղեկություններ եք պահանջում, խնդրում ենք կապ հաստատել **Տեղանքի կեղտաջրերի մաքրման ծրագրի** հետ **(626) 430 5380** հեռախոսահամարով: